ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 368 – Ա **04 հոկտեմբերի 2019 թ.**

ԲՅՈՒՐԵՂԻԿ ՀՈՎԵՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 159-րդ 164-րդ, 169-րդ հոդվածների և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Բյուրեղիկ Հովեյանի դիմումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բյուրեղիկ Հովեյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 7-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները 2019 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 7-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտաշխատող Մարինե Սեֆիլյանի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 8-ին:

04.10.2019

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ